ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԱԴԱՇՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (Ծածկագիր 3.1-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտի համայնքապետարանի աշխատակազմի ***առաջատար մասնագետ (Ծածկագիր 3.1-1)***

ա)կատարում է քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով.

բ)ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

գ)հետևում է քարտուղարի հանձնարարականների՝ համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց մասին զեկուցում է քարտուղարին.

դ)իր լիազորությունների սահմաններում անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

ե) իրականացնում է քաղաքացիների հերթագրում քարտուղարի մոտ ընդունելության համար.

զ)աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմում է համայնքի բյուջեի նախագիծը.

է)աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարման, վճարման, փաստաթղթերի կազմման, ներկայացման աշխատանքները.

ը)աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն.

բ) ՀՀ Սահմանադրության, ՀՀ ընտանեկան օրենսգրքի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Հաշվապահական հաշվառման մասին>>, <<Գանձապետական համակարգի մասին>>, <<Գնումների մասին>>, <<Եկամտային հարկի մասին>>, <<Բյուջետային համակարգի մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) անհրաժեշտ տեղեկատվությանը տիրապետելու ունակություն.

դ) համակարգչով և այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2020 թվականի սեպտեմբերի 29-ին, ժամը 12^{00}-ին՝ Արևադաշտ համայնքապետարանի շենքում

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020 թվականի սեպտեմբերի 14-ը:

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա)Գրավոր դիմում (հանձնաժողովի անունով),

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար(3x4 չափսի)

է)անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Արևադաշտի համայնքապետարանի շենքում (Սարի թաղի N1 վարչական շենք հասցեում) կամ ՀՀ Արմամիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչությունում (ք. Արմավիր, Աբովյան 71) ամեն օր ժամը 9:00-ից մինչև 18:00-ն՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացրած փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արևադաշտի համայնքապետարանի աշխատակազմ (գ.Արևադաշտ Սարի թաղի N1 վարչական շենք հասցեում , հեռ.՝094 36-62-14), ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (ք. Արմավիր Աբովյան 71) հեռ.՝ (0237) 2-07-70, (0237) 2-76-49:

Մրցույթները կկայանան 2020 թվականի սեպտեմբերի 29-ին ժամը 12^{00}-ին՝ Արևադաշտի համայնքապետարանի շենքում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետը 2020 թվականի սեպտեմբերի 14-ը ժամը 18^{00}-ն է:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ գ. Արևադաշտ Սարի թաղի N1 վարչական շենք հասցեում , հեռ.՝094 36-62-14